Արձանագրություն N 3
«ԳՀԱՊՁԲ- ԵՀԹՊՏԹ-01-19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան 30 մայիսի 2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Մինասյան
Անդամներ՝ Ա. Հարությունյան
Ա. Ավագյան
Գնումների համակարգող /քարտուղար/՝ Լ. Չախոյան

1. **«ԳՀԱՊՁԲ- ԵՀԹՊՏԹ-01-19» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի պահանջներին համապատասխան մասնակցի որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին**

Ընդունել ի գիտություն, որ.

ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ հարցման մասին ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 29,05,2019թ տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն:

Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներ՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ն և «Օվացիա» Պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են ապրանքների ամբողջական նկարագրերը:

1.1 ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ «Էկոմիքս» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «Օվացիա» Պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ն, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություններ:

1.3 30,05,2019թ «Օվացիա» Պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ի կողմից ստացվել է դիմում, որտեղ մասնակիցը հայտնում է, որ Վարչապետի աշխատակազմի կողմից հայտարարված պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրային վճարումը իրականացվել է ուշացմամբ, որի արդյուքում մատուցված ծառայությունների համար առաջացած հարկային պարտավորությունները մարվել են վճարումը ստանալուց անմիջապես հետո, 23,05,2019թ: Դիմումին կցվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի թիվ 3 բաժնի 24,05,2019թ-ի տրված տեղեկանքը՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների,

սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ:

1.4 «Էկոմիքս» ՍՊԸ-ն և «Օվացիա» Պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրերը համապատասխանում են հրավերում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Հանձնաժողովը որոշեց.

2"1

1,2,3,4,5 և 6 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Օվացիա» Պրոդյուսերական կենտրոն ՍՊԸ-ին, 7,8,9,10,11 և 12 չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Էկոմիքս» ՍՊԸ-ին:

2"2

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ սահմանվում է անգործության ժամկետ՝ 5 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 3 Դեմ՝ 0

7. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները

Գնահատող հանձնաժողով՝

Նախագահ _____ Հ. Մինասյան

Անդամներ _____ Ա. Հարությունյան

_____ Ա. Ավագյան

Գնումների համակարգող
/քարտուղար/ _____ Լ. Չախոյան